Ա Ռ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ԹԻՎ 14-Ա ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 14-Ա որոշման մեջ հղումը սխալ է կատարված: Հղմամբ նշված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով՝ ավագանին համաձայնություն է տալիս համայնքի ղեկավարի ներկայացրած՝ համայնքային հիմնարկների ղեկավարների թեկնածուներին: Տվյալ դեպքում ավագանին համաձայնություն է տվել ոչ թե համայնքի ղեկավարի ներկայացրած համայնքային հիմնարկի ղեկավարի թեկնածուին, այլ կազմակերպության տնօրենի (համայնքային ոչ առևտրային կազմակերպության) **ժամանակավոր պաշտոնակատարի** թեկնածությանը, մինչդեռ օրենքի նշված կետը կազմակերպության տնօրենի **ժամանակավոր պաշտոնակատարի** թեկնածությանը չի վերաբերում:

Ավելին, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ նշանակում և ազատում է համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին, բացառությամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների, որոնք նշանակվում են մրցույթի արդյունքներով:

17.03.2020թ.